

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/1

17 մարտի 2015 թ.

Քննարկվեց «Վ.Ա.Ս. Գրուպ» ՍՊԸ 05.03.2015 թ-ի թիվ 9 գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 02.03.2015 թ-ի թիվ 5101028 ակտի դեմ:

«Վ.Ա.Ս. Գրուպ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Համաձայն ՀՀ ՖՆ ԽՀՎ ՀՏ պետի 10.02.2015 թ-ի թիվ 6206766 հանձնարարագրի, «Վ.Ա.Ս. Գրուպ» ՍՊ ընկերությունում կատարվել է հսկիչ գնման ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է 13.02.2015 թ-ի թիվ 6206766 արձանագրությունը: Վերջինովս արձանագրվել է տնտեսվարող սուբյեկտի կողմից հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում՝ համաձայն ՀՀ Կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման հավելված 2-ի 40-րդ կետի 4-րդ ենթակետի:

Այնուհետև, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 20 փետրվարի 2015թ-ի թիվ 101028 հանձնարարագրի ընկերությունում կատարվել է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում և հիմք ընդունելով վերը նշված հսկիչ գնման ուսումնասիրության ժամանակ կազմված արձանագրությունը, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետի 2-րդ մասի համաձայն ընկերությանն առաջադրվել է տուգանք տվյալ գործունեության իրականացման վայրի նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության՝ 0.7 տոկոսի չափով, գումարով 1.971.397 դրամ:

Վերը նշված թիվ 5101028 ստուգման ակտի կապակցությամբ ստորև ներկայացվում են ընկերության առարկությունները:

Քանի որ ընկերության վաճառողուհին հարկային տեսուչի կողմից գնումը կատարելուց հետո գնված ապրանքը տեղադրել է արկղի մեջ և այդ ընթացքում պատահմամբ վճարված գումարի մանրի վերադարձից հինգ հարյուր դրամանոցը ընկել է գետնին, որն աշխատակցուհու կողմից չի նկատվել: Ադյունքում տեսուչի մոտ ձևավորվել է այն կարծիքը, որ մանրը պակաս չափով է վերադարձվել, ինչը և հիմք է հանդիսացել վերոգրյալ արձանագրությունը կազմելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է վերանայել թիվ 5101028 ստուգման ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ պետի 10.02.2015 թ-ի թիվ 6206766 հանձնարարագրի «Վ.Ա.Ս. Գրուպ» ՍՊԸ-ում

(այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 13.02.2015 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6206766 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

հարկային տեսուչ Արսեն Զուրաբյանի կողմից 13.02.2015 թ-ին ք.Երևան, Արին Բերդի 14 հասցեում գործող «Վ.Ա.Ս. Գրուպ» ՍՊԸ-ին պատկանող իրացման կետից կատարվել է հսկիչ գնում ընդհանուր գումարով 6400 դրամ: Գնվել է արևածաղիկի ձեթ «Սոլնիչնայա լինիա» 1 լիտրանոց 10 հատ: Վաճառողուհին տեղեկացրել է, որ վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 6400 դրամ՝ յուրաքանչյուր հատի համար 640 դրամ: Նշված գնման դիմաց կանխիկ վճարվել է մեկ հատ հինգ հազարանոթ և երկու հատ հազար դրամանոց թղթադրամներ, ընդամենը յոթ հազար դրամ: Վաճառողուհի Լալա Բաբայանը ետ է վերադարձրել 600 դրամ, սակայն ՀԴՄ է մուտքագրել 5900 դրամ և տրամադրել է 5900 դրամի ՀԴՄ կտրոն: Ուսումնասիրությունն իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման, սակայն հրաժարվել են հանձնարարագրին ծանոթանալուց: Բացի այդ, վաճառողուհին հրաժարվել է ետ ընդունել գնված ապրանքը և տրամադրել 6400 դրամի ետ վերադարձի կտրոն:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ ընկերության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման Հավելված 2-ի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 20.02.2015 թ-ին հրապարակվել է թիվ 5101028 հանձնարարագիրը, որի համաձայն «Վ.Ա.Ս. Գրուպ» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 02.03.2015 թ-ի թիվ 5101028 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով վերոգրյալ խախտման համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի բ) ենթակետով նախատեսված տուգանքը՝ գումարով 1.971.397 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 01.08.2013 թ. թիվ 846-Ն որոշմամբ հաստատվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի (այսուհետ՝ Հավելված N 2):

Հավելված N 2-ի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն. «Օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում է դիտվում՝

...

4) գնված ապրանքի կամ ստացված ծառայության արժեքից ցածր արժեքի կամ քանակից փոքր քանակի մուտքագրումը ՀԴՄ.»:

Իր հերթին, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի բ) ենթակետի համաձայն. «2. Հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտմամբ

հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է՝

...

բ) հարյուր հիսուն հազար դրամի չափով՝ գործունեության այլ տեսակների մասով:

Տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույն մասի առաջին պարբերությունում նշված խախտումն առաջին անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության զրո ամբողջ յոթ տասնորդական տոկոսի չափով, բայց ոչ պակաս «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ արտոնագրային վճարի օբյեկտ չհամարվող հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով՝ մեկ միլիոն դրամից, այլ գործունեության տեսակների մասով՝ երեք հարյուր հազար դրամից, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 5 օրով»:

Քննարկվող դեպքում «Վ.Ա.Ս. Գրուպ» ՍՊԸ-ի ք.Երևան, Արին Բերդի 14 հասցեում գործող իրացման կետից 13.02.2015 թ-ին կատարված հսկիչ գնման արդյունքներով արձանագրվել է Հավելված N 2-ի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների խախտման փաստ: Մասնավորապես, գնվել է «Սոլիչնայա լինիա» տեսակի 10 հատ արևածաղիկի ձեթ՝ ընդհանուր գումարով 6400 դրամ: Կատարված գնման դիմաց կանխիկ վճարվել է յոթ հազար դրամ և ետ է ստացվել 600 դրամ մանրադրամը, սակայն 6400 դրամի փոխարեն ՀԴՄ է մուտքագրվել 5900 դրամ և տրամադրվել է 5900 դրամի ՀԴՄ կտրոն: Այսինքն, ընկերության կողմից թույլ է տրվել հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում, որի համար Ակտով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի բ) ենթակետով նախատեսված պատասխանատվության համապատասխան միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 02.03.2015 թ-ի թիվ 5101028 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ